

# Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 134

**Թագաւոր** – Մի թագաւոր մէկն է որը կարգաւ է Աստուծոց որպէսզի ներկայացնել Իր իշխանութիւնը աշխարհում, պահպանելով աստուածային կարգ մարդկանց մէջ: Եբրայերէն բառը որը գործածուել է թագաւորի համար «մէլէխ» բառն է, եւ Յունարէն «բասիլոս» բառն է: Մէկ ձեռքի վրայ Աստուածաշունչը ուսուցանում է թէ Աստուած, որպէս բոլոր ստեղծագործութեան արարիչը ու պահպանողը, տիեզերքի թագաւորն է: Նա տիրում եւ պահպանում է ամեն բան՝ ներառեալ բոլոր եղելութիւններ ու պարագաներ: Բոլորը ենթակայ են Նրան, եւ ոչ մի բան կարող է խափանել Իր ծրագիրները (Բ. Մնացորդաց 20:6, Սաղմոս 47:7-9, 103:19, Առակաց 16:33, 19:21):

Միւս ձեռքում Աստուածաշունչը խօսում է Աստուծոյ թագաւորութեան մասին որպէս օրհնութեան եզակի տեղը ուր ժողովուրդը սրտանց (յօժարութեամբ) եւ ցնծութեամբ գիտակցում են Աստուծոյ իշխանութիւնը եւ հպատակում են դրան (Հռովմայեցիս 14:17): Տիեզերքի Մեծ Թագաւորը ստեղծեց եւ նշանակեց Ադամին որպէս Իր փոխարքան, եւ տուց նրան ամենաառաջին «իշխանութիւնը» կառավարելու եւ տիրելու կենդանի աշխարհին՝ ի փառս Մեծ Թագաւորի (Ծննդոց 1:26-28): Մարդը ապա փորձեց ու մեղանչեց Աստուծոյ օրէնքի դէմ, եւ ընկաւ իր ուղղարար դիրքից եւ պարտականութիւնից: Դրանից ի վեր, ընկած մարդկութիւնը դարձաւ Աստուծոյ թշնամին, միանալով Սատանային ու ընկած հրեշտակներին ապստամբելով Աստուծոյ եւ Իր տիրութեան դէմ:

Իր յախտենական հրովարտակում, Աստուած շնորհաբար մտադրել էր փրկելու մեղաւորներին, եւ ազատելու նրանց խաւարի թագաւորութիւնից Իր յոյսի թագաւորութեան մէջ՝ ուր ժողովուրդը պիտի յօժարութեամբ սիրէին եւ պաշտէին Իրեն, եւ ուստի հնազանդէին Նրա իշխանութեան (Եփեսացիս 1:3-12): Աստուած յայտնեց այս թագաւորութիւնը աստիճանաբար, նախ անհատների ու նրանց ընտանիքների միջոցով, եւ ապա Նա հաստատեց մի ուխտ Աբրահամի եւ նրա սերունդի հետ (Ծննդոց 12:3, 17:4-7): Յետագայում Աստուած Եգիպտոսից դուրս ազատեց Աբրահամի սերունդին, եւ Մովսէսի միջոցով հաստատեց Իսրայէլին որպէս մի աստուծապետութիւն՝ Իր տեսանելի թագաւորութիւնը (Ելից 19:5-6): Մարդկային թագաւորութեան գաղափարը արդէն վաղուց նախապատմել էր Յակոբով (Ծննդոց 49:10), ու Մովսէսով (Երկրորդ Օրինաց 17:14-20), ուր թագաւորը ներկայացնելու էր Ամենագօր Թագաւորին, լինելով հնազանդ Իր օրէնքին՝ տիրելով ժողովրդին իմաստութեամբ եւ ուղղարարութեամբ:

Մովսէսից եւ Յեսուից յետոյ, Իսրայէլը կառավարեց դատաւորներով: Աստուած ապա նշանակեց թագաւորներ կառավարելու Իր ժողովրդին՝ դրանցից ամենամեծը լինելով Դաւիթ թագաւորը: Բայց թագաւորների մեծամասնութիւնը չարագործ էին եւ ձախողեցին իրենց պատասխանատուութիւններում, արհամարհելով Աստուծոյ օրէնքը, եւ առաջնորդելով ժողովրդին մեղքի եւ կռապաշտութեան մէջ: Ժողովուրդը եւ դրանց թագաւորները ապստամբեցին իրենց Տիրոջ դէմ, ու Իսրայէլի եւ Յուդայի թագաւորութիւնները վերջապէս վերացեցին եւ ժողովուրդը աքսորեցին: Մովսէսը ու մարգարէները նախատեսած էին այդ ապստամբութիւնը եւ աքսորումը, սակայն նրանք նաեւ տեսան մի մեծ վերականգնում (Երկրորդ Օրինաց 30:1-10, Եսայիա 2:1-5, 25, Երեմիա 31:31-40, Ամովս 9:11-15), ուր ժողովրդի մնացորդը պիտի ապաշխարէին եւ Աստուած պիտի դարձնէր ազատելու ու վերականգնեցնելու Իր ժողովրդին: Թէպէտ ժողովուրդը վերջապէս վերադարձան աքսորումից, սակայն դրանց վիճակը շատ պակաս էր այդ նախատեսուած փառաւոր վերականգնումից: Աքսորման տառապանքները շարունակեցին, պատճառաւորաբար առաջնորդների ապականութիւնից (Չաքարիա 10:2-3, Մաղաքիա 2:1-9), ու նաեւ ժողովրդի ճշմարիտ եւ հաւաքական ապաշխարութեան պակասութիւնից (Եզրա 9, Անգէ 1:1-6, Մաղաքիա 1:6-14, 2:10-17, 3:8-9): Դաւիթեան թագաւորի վերադարձը չիրագործեց քանի որ ժողովուրդը դեռ Հեթանոս թագաւորների եւ տիրողների իշխանութեան տակն էին: Այս վերականգնումը դեռ ապագայ էր, երբ Աստուած պիտի դուրս բերէր Իր ժողովրդին մի նոր եւ աւելի փառաւոր ելքի միջոցով, որը պիտի յառաջացնէր մի նոր թագաւորութիւն, հաստատուած մի նոր ուխտի վրայ (Երեմիա 31:31-33), մի նոր Իսրայէլի հետ (Եզեկիել 37, Միքիա 4:1-5), եւ իշխուած մի նոր թագաւորով (Եզեկիել 34:23-24, 37:22-25):

**Քրիստոս որպէս թագաւոր** – Հին Կտակարանը նախագուշակեց մի մեծ թագաւորի գալուստը (Ծննդոց 49:10, Թուր 24:17, Բ. Թագաւորաց 7:16): Թէպէտ սրանց անմիջական իրագործումը Դաւիթ թագաւորն էր ու նրա թագաւորների գիծը, սակայն գերագոյն իրագործումը Յիսուս Քրիստոսն էր (Սաղմոս 2, 45:6-7, 110): Մարգարէները նախատեսան գալիք Մեսիային որպէս Իսրայէլի իսկ Թագաւորը (Եսայիա 9:6-7), բացատրուած որպէս «մի շառաւիղ» որը դուրս է գալիս «Յեսսէի բունիցը (կոճղիցը)», որը պիտի բարձրանար եւ տիրէր իմաստութեամբ, ուղղարարութեամբ եւ գօրութեամբ (Եսայիա 11:1-5, Երեմիա 23:5, 33:15-22, Չաքարիա 6:12-13): Միքիան նաեւ նախատեսեց թէ Մեսիան կ'ունենար մի խոնարհ սկիզբ, բայց նաեւ ակնարկեց Նրա աստուածութիւնը (Միքիա 5:2): Չաքարիան նախապատմեց գալիք Թագաւորին, բերելով փրկութիւն ոչ թէ որպէս մի յաղթող թագաւոր, այլ Իր խոնարհութեամբ՝ անելով այն ինչ որ պետք էր փրկութեան համար (Չաքարիա 9:9):

Այս մարգարէութիւնները մատակարարեցին մեծ յոյս փշուած ու սրտաբեկած ժողովրդին, ստեղծելով մի մեծ ակնկալութեան զգացում իրենց Դաւիթեան թագաւորի նկատմամբ՝ որ գայ, վերականգնեցնի եւ միաբանի ժողովրդին, եւ վերջ տայ իրենց տառապանքը (Եզեկիել 37:22-25):